

է թէ ինչպէս երկեակները, որոնք խաղերի տարրական ձեն են, զարդանալով դառնում են համեմատաբար աւելի մեծ խաղեր, եռեակներ և քառեակներ։ Յաճախ ի հարկէ դժուար է որոշել թէ արդեօք որն է հիմնական երկեակը, և թէ արդեօք հիմնական երկեակից է եռեակ ու քառեակ զարդացած, թէ ընդհակառակին Բայց այս դժուար է միայն նիւթի պակասութեան պատճառով։ Եթէ կարեսը նիւթը ձեռքի տակ ունենայ մարդ և համբերութիւն ունենայ մանր մանր աշխատանք անելու, կարելի է է ասել թէ միշտ կորոշուին խաղերի հիմնական ձեւը իրենց զարդացումներից։

Խնդիրն այսուեղ ի հարկէ այն չէր, որ մենք որոշելինք այս կամ այն խաղի հիմնական ձեն իւր զարդացումից, այլ ցոյց տալ թէ ինչպէս պարզ խաղերից կազմում են բարդ խաղեր։ Եւ եթէ մենք մի փոքր աւելի օրինակներ բերինք, այդ միայն նրա համար, որ մեր ընթերցողների մի մասի ծանօթութիւնը մեր ժողովրդական խաղերին՝ շատ աւելի չէ քան «Մուրճ» ամսագրի գաւառագիտուն մատենախօսին, որ՝ եթէ որ և է խաղի այս կամ այն ձեւ իրեն յայտնի չէ, համարում է «աարքովի», «Ժխովի», «շինծու», «աղճատուած», կամ «ոչ ժողովրդական» և այլն։ Այդպիսիներին կարճ խօսքով քան հասկացնելը դժուար է։ Բայց մենք դառնանք մեր երդերի զարդացմանը։

(Կը շարունակուի)

Ա. Ա. Ա. Ա.

### ՇիրԱկի ԳիհղԱկԱն ԿԵԱՆՔԻՑ

Վահրամ իշխանի վրայ մի կարմիք, սիրուն քար է ձգած և վրան գրուած է։ — Առա ամփոփին նշխարք Վահրամայ իշխանաց իշխանի հայոց մեծաց, և ցեղէ Պահլաւունի, որ նահատա-

կեցաւ և թուրքաց պատերազմի և Մարմաշինի հայոց թվի նվազ Քարի հիւսիսային կողմը դժամ է, — և տապան նորոգեցաք, իսկ վրան նկարած է մի խաչ,

Վահճամի մահուան մասին Ժամանակադիր Աբիստ, Լառտիվերտցին այսպէս է պատմում.

«Յոյներն Անին առնելով, տիրեցին Հայաստանին՝ այնուհետեւ սկսեցին հարկերը ծանրացնել, Հայոց մեծամեծ իշխաններին իրանց տեղերից հալածել և իրանց բարեկամ կաթողիկոսին էլ տեղիցը աքսորել. դրանով էլ ըբաւտկանացած՝ ուղեցին Գունի քաղաքն էլ տիրել. բայց հակառակը դուրս եկաւ. որովհետեւ Գունիի պատերազմի մէջ յաղթուեցին Գունիի Ապուսվար ամեւրան քրիստոնեաների վրայ զայրացած՝ յոյների փոխանակ, հայերին սկսեց հալածել. և սովորեց քրիստոնէական հաւասան ուղանալ. սակայն Վահճամ Պահլաւունին չհնազանդուեց ամեւրային և որպէս եկեղեցու և հայրենիքի պաշտպան՝ Ապուսվարի դէմ պատերազմի դուրս եկաւ. Զնայելով որ Վահճամն յաղթեց. բայց ինչըն էլ ընկառ պատերազմի մէջ (1087 թ.): Վահճամի մարմինը Մարմաշէնում թաղելու մասին, Եկեղեցու հիւսային պատի արձանագիրը պատմելով Արքիք Մագիստրոսի մահը՝ առում է, — Զմարձին նորա (Խարիֆի) բերեալ թաղեցաց առ դրան սրբոյ Կաթողիկէիս, մերձ առ Նշխարս յանուն մերոյ Վահճամայ իշխանի»:

Եկեղեցու հիւսիսային և հարաւային պատերի վրայ եղած մեծ անաղարդ արձանագիրն այսուեղ կը կնելն աւելուգ եմ համարում, որովհետեւ դրանց ըովանդակութիւնը ծանօթ է ընթեցողներին Արէլ Եպիսկոպոսի, և Յլիշանի և վերջեցու հրատարակուած Մելքիսեդէկ քահանայի աշխատութիւններից: Այդ արձանագրութիւնները վերաբերուում են Եկեղեցու շինութեան կամ վերանորոգուելու հանդամանքներին, որոնց մէջ պատմուում է, թէ ինչպէս Պահլաւունի հիմնագիրները կամ նորոգողները ոչինչ ջանք և աշխատանք չեն խնայել իրանց ձեռակերտը զարգարելու և նրան շինուացնելու համար նուիրել են գիւղեր, խանութներ, ջրաղացներ, այգիներ և հողեր:

Այդպիսի մեծաքանակ նուէրները տուել են պահլաւունիները ապահովելու «բազմագումար քահանայից» ապրուսաը, որոնք պէտք է պատասագ մատացանէին նուիրողների մերձաւորների յեշատակին: Մարմաշէնում առաջնորդներ են եղել Երեմիա և Սոսթենէս: Հաւանական է, որ Մարմաշէնի առաջնորդութիւնը շատ չէ տեսել. Կա էլ Հայաստանի միւս վանքերի հետ ենթարկուել է մոնղոլների աւարառութիւններին և հե-

տըղնետէ քարքայուել, ամայացել է:

Արգէն չեցեցինք, որ եկեղեցու երկու կողմում կան ուրեշ փոքր եկեղեցիներ, նը ամսիցից հիւսիսայինը մէկ սաժէն միայն հեռ ուն է, իսկ հարաւայինը մօտ 10-ը սաժէն: Սրանց ձևը նման է մեծին: հիւսիսայինը վիսակորհան է և, ոչ մի արձանազրութիւն չունի: իսկ ճամրաւայինը բաւական նաք է, զարդ երեսի քարերը վերևից սաժէնաչափ թափուած:

Այս եկեղեցու անունը իմանում էնք մեծ եկեղեցու հարաւային պատմի վրայ եղած Մարիամ թագուհու արձանագրութեան մէջ:

Ա. Պետրոս եկեղեցու երկարութիւնը՝ սեղանի առաջից մինչև դուռը 7 արշին է, իսկ լայնութիւնը՝ 8 արշին: սեղանի աջ և ձախ կազմերում կան քառակուսի խորտներ երկու արշին լայնութեամբ, նոյնպիսի խորտներ կան տրեմուեան դրան մօտ, այս եկեղեցին ունի խաչկալ և ուրեշ սպասներ, կարմիր շալէ կտորից մի լաւ վարագոր, նուերուած 1885 թ., մարտի 2-ին, — յիշատակ Սալոմէ Յակովը ան ջլթողցեանի:

## 6.

Կողնից դաղթած ժամանակ, Պողոս վարդապետ Զանկաթթեանը Հառան—Դալայից իւր հետ բերեց «Խօթն-վիրաց» ո. Առառւածածնի պատկերը և ժամանակաւորապէս դրեց Մարմաշէնի վանքում: Պատկերին ամբան կողմից ութաւաւորներ էին դալիս և բաւական արգեւնք թողնում: Սրանով օդառուած՝ վարդապետը ոկտեց վանքի քանդուածները նորոգել: Բայց Կարեցի Ցողհաննէն կաթողիկոսը նշան ո. Պատկերի հետ տեղափոխեց Հառիճ: Այդ օրից ոկտած Հառիճը կենդանացաւ: 1850 թուին Ալեքսանդրապոլի մի քանի քարեպաշտ անձինք ծայրագոյն Հոգեւոր Խշամնութեան հաւանութեամբ մի հոգաբարձութիւն կազմեցին, որին մշտական նախագահ և զեկավար եղաւ Տէր Ցովսէի աւագ քահանայ Վոստանեանց: Հոգաբարձութիւնը նախ և ուռաջ նորոգեց ո. տաճարների քայլայեալ մասերը, ապա մաքրել ուռեց վլատակները և ի վերջոյ 1856 թուին շենցի մի քանի սենեակներ, որոնց մէջ բացեց ոսումնարան գեւղացի մանուկների ուսման համար:

Այդ բարե օրինակին հետեւցին մի քանի ուրեշ Ալեքսանդրապոլցիներ և 1859 թուին խնդրամատոյց եղան Մատթէոս կաթողիկոսին, որ հոգաբարձութիւն հաստատէ Ղանլիճու վանքերի վրայ, նախագահ նշանակելով Մովսէս քահանայ նըեւ-

մեանցին։ Քոսան հոդի էին այս նոր ընկերութեան անդամները, որոնք ամսական պարտաւորւում էին մի-մի սուբլի վճարել յօդուտ դուծին Բացի անդամավճարներից, հոգաբարձութիւնը պիտք է ստանար մեծ վանքի մէջ եղած «Կարմիր Աւետարանի» արդիւնքի կէոր, որը տալիս էր մօտաւորապէս 40—50 ըուբլի։ Ընկերութիւնն իւր գոյութեան ընթացքում ու Պետրոսի եկեղեցին իւր ձեռքն առաւ, թեթև կարկատաններ արեց, խաչկալ շինել տուեց, եկեղեցական անօթեղէններ ձեռք բերեց, շինել տուեց մի փոքրիկ ուսումնարան երկու սենեակից և մէկ բակից բաղկացած։ Ուսումնարանի շինութեան վրայ հոգաբարձութիւնը ծախսեց մօտաւորապէս 150—200 ըուբլի։

Սակայն այս ընկերութիւնը երկար ժամանակ չկարողարաւ գոյութիւնը պահպանել. նաև որ իրանք անդամները չքաւոր մարդիկ էին, որոնց համար ամսավճարը ծանը էր և երկրորդ՝ որ ընկերութիւնը քաղաքի մէջ երկրորդը լինելով, որ իրան էր քաշում ուսաւորների մի մասը, այնպէս որ Հառիճու արդիւնքները զգալի կերպով պիտի պակասէին, ուստի խրախոյն չգտաւ տեղի հոգեոր իշխանութիւնից և երկրորդ՝ լինքը՝ հայր նախագահը ձեռնհաս մարդ չէր։ Հինդ տարի միայն դպրոցում գասերը շարունակուեցին։ Այդ ժամանակ դպրոցում սովորում էին 25—30 աշակերտ։ Զկարողանալով կանոնաւոր ուսուցիչ վարձել, բաւականանում էին խալֆաններով, որոնց վճարում էին տարեկան 120 ըուբլի։ Ընկերութիւնը կազի կազ առաջ գնալով, հետզհետէ լուծուեց։ 1879 թուին այս ընկերութիւնը կըկին նորոգուեց։ Նորերին միացան հեռացածներից մի քանիսը։ Նորոգուած ընկերութիւնը առ ժամանակ շարունակեց հնի գործունէութիւնը, մինչև վրահասաւ 1884 թուի դպրոցների փակումը, որոնց հետ փակուեց նաև Դանիլիճու դպրոցը։ Այնուհետև ընկերութիւնն էլ քայլայուեց, վերստին չնորոգուելու պայմանով։

Ընկերութեան վերջնականապէս լուծուելով՝ չվերջացաւ նախագահի պաշտօնը։ Հայր նախագահը իւրացրեց ու Պետրոս եկեղեցու վանահօր սլաշտօնը, որ տեսեց մինչև 1900 թիւր։ Ամեն կիւրակի տէր վանահայրը, բանալին դրստանում, ստիպուած էր ծիսով զիւղ գնալ, ուսաւուորներին այցելութեան։ Նա սիրով երթեմն էլ հայրաբար բարկանալով ու խտաւորների վրայ՝ քաց էր անում եկեղեցու դուռը, «Տէր Սահակի աւետարանն» էր կարդում նրանց վրայ և հաւաքելով նրանց արդիւնքները, դառնում էր տուն։ Ցիշեալ թուին Հոդ. Կառավարութիւնը վերջնականապէս առաւ տէր հօր ձեռքից եկեղեցու բանալին,

միենոյն ժամանակ պահանջելով՝ նրանից 1000 բուրլու բաց մնացած հաշեւք: Խոկ գպրոցական շենքը քայլարման դրութեան հասած, մնում է ամայի: Ոչ ոք չի մտածում նորոգելու և յարմարացնելու քաղաքից գնացող բազմաթիւ ուխտաւոր ների համար:

Այժմ «Կարմիր Աւետարանի» ամբողջ արդիւնքը մնում է գիւղի եկեղեցուն: Խո հետաքրքրուեցի իմանալու թէ ոքան արդիւնք է ստացւում Աւետարանից: Խնձ հաւատացրին, թէ հազիւ 50 բուրլի կը լինի: Սրա հակառակ գործին տեղեակ անձինք պնդում են, որ Աւետարանի արդիւնքը 400 բուրլու չափ կը լինի, չհաշուելով շուշպաները, փթերով խունկն ու մոմը: Գիւղացիք Աւետարանի արդիւնքները ապօքինի կերպով գործ են գնում հասարակական ծախսերի վրայ: — Նրանցով ամարանցի հող են վերցնում, նախըշուն վարձ տալիս են: Արդիւնքից աւելի օգտում են հաշուետեսներն ու երեցփոխը, նրանք փողի կարիք ունենալիս, վերցնում են իրք փոխառութիւն: Այստեսակ փոխառութիւններ արել են գիւղացիք, մեայն անցեալ տարի քաղաքագլուխ պլ. Գեղամ Տէր Պետրոսեանի օժանդակութեամբ և գիւղացիների պարտքերը ժողովելով՝ եկեղեցու վրայ ծախսեցին մօտաւորապէս 400 բուրլի:

## ԶԵՐԱԳՐԵՐԸ.

Եկեղեցում կան հետևեալ ձեռագիր աւետարանները: —  
1) Թղթեայ, երկէջեան, բոլորագիր մեծադիր աւետարան: Սա գրուած է ՌՃ (1623 թ.) կարմիր կաշեկազմ ունենալու համար կոչում է «Կարմիր Աւետարան»: Կազմը նորոգուած է ՌՃ: Թուին (1684), բջնի գիւղում Յիշուում է նաև Քանաքեռի և Աստուածածին եկեղեցու անունը: Գրչութեան արուեստը նշանաւոր չէ: Այս աւետարանին են ուխտ գալիս քաղաքից ու գիւղերից: Աւետարանը երկար ժամանակ սեպհականութիւն էր Գալուստ անունով մի գիւղացու: Նրա տունը մինչեւ օրս էլ օթեան է համարւում, որտեղ ուխտ են գնում: Այժմ աւետարանը գտնուում է եկեղեցում և պահուում է առանձին տուփի մէջ:

2) Արծաթէ շրջանակով և ասլակէ ակներով մեծադիր կաշեկազմ աւետարան: Ակզեք երեսներում նկարուած են ո. Գրքից և աւետարանի պատկերներ, օրինակ՝ աշխարհի ստեղծումը, նախածնողները դրախտում, նրանց մեղանչելը, դրախտից արախտուիլը. Աբրահամի խահակին զոհելը են. Ցիսուսի ծնունդաքսուիլը. Աբրահամի խահակին զոհելը են.

դը, մկրտութիւնը, Տաճար տարուիլը. Մոգերի երկրպագութիւնը, Երուսաղէմ մտնելը, Զարչարանքը, Թաղումը. Յարութիւնը և լն. Պատկերների մէջ իշխում են դեղին, կարմիր և կանաչ գոյները, թէ գրչութիւնը և թէ Նկարները ցոյց են տալս ճաշակի և հմտութեան բացակայութիւն, յիշատակարան չունի:

3) Փոքրադիր աւետարան. Սա գրուած է անհամեմատ մաքուր և գեղեցիկ: Գեղեցիկ են նոյնպէս պատկերները: Գրուած է ՌԱՀ թուին (1687). Գրողն է Տէր Միսիթար անունով մէկը. Ոյս գեղեցիկ աւետարանը յիշատակ է տուել Ղանլիճու եկեղեցուն Բայազետցի Աւետիս Մելքոնեանը:

4) Մագաղաթեայ աւետարան, միջակ դիրքով, գրուած ՌԱՀ թուին (1602). յիշատակարանի մէջ ասւում է,—Ի հայրաբարետութեան Սարդու և Յովհաննիսի Աղուբբէկի որդւոյ Հասան բէկի—անձաշակ, անաբուեստ գործ է:

5) Մեծադիր թղթէ ճաշոց. կաշեկաղմ. մաքուր և լաւ գըշի արդիւնք. գրուած 1736 թ. գրողն է Կիրակոս անունով մէկը. ոտացողն է Սահակը, իւր Գիւլում, Մահանեսի Կիւրեղ եղբայրների յիշատակին. վերջից թուղթ է ընկած. յիշատակարանը թերի է. աճա . . . . Երկիրն . . . . նան . . . . Երես անկեալ են:

6) Վերին Ղանլիճայում կայ մի Յայսմաւուրք թռչնագիր և ծաղկանկար. սկզբից մի քանի թուղթ պակասում է. դեղնել է և խոնաւութիւնից շատ տեղ չի կարելի կարգալ. վերջանում է Յովհանափի և Բարբաղամու պատմութիւնով, որ ըստում է Երկիջեան 25 Երես: Սաացողն է Գորեցի Ամիջըարի որդի Մահանեսի Ալազբարի որդին՝ յիշատակ իւր կողակից Ալումի Սուլբանին:

### Ենեոազիր արձանագրութիւնը.

Պատմական և բանասիրական տեսակետից աւելի նշանակութիւն ունի Ղանլիճու Հնագոյն մի յիշատակարան: Խօսք ըկեռագիր արձանագրութեան մասին է, որ գտնւում է Ղանլիճու գլխին Բաղալտեան Ժայռի վրայ: Արձանագրութիւնը հինգ տողից է բաղկացած և այնպէս լաւ է մնացել, որ կարծես Երեկ լինի փորուած: Քեռուագետների կարծիքով այս արձանագրութիւնը պատկանում է Աւքարտեան Արգիշտի թագաւորին: Արա մէջ Արգիշտին պատմում է Երիախսի Երկրի և Խրինիունի քաղաքի նուաճումը: Հաւանական է, ասում են ըկեռագէտները, որ Երիախսի Երկրը գտնուէր դաշտե վրայ, իսկ Երտինիունի

քաղաքը այժմեան Ղանլինու տեղը, որտեղ ըլսե վրայ կան հին շէնքերի մնացորդներ։ Այս կետը ուազմական տեսակէտից շատ նշանաւոր էր՝ նոչպէս որ այժմու է։ Այստեղից երկու ճանապարհ է բացւում։ մէկը տանում է գէոլի Բարձր Հայոց լեռները՝ այժմեան Կարսի նահանգը, իսկ միւսը, Արփաչայի ծորով անցնում է գէպի Փոքր—Կովկաս, գէպի Կուբ գետի հովիտը, այժմեան Ալաքավալակի և Ախալցխայի վրայով։ Թէև այս ուղին շատ դժուարագնաց է, բայց ընական ճանապարհ է, որ տանում է գէպի Հիւսիսային Կովկաս։

Բնական է, որ Ազգիշտու նման աշխարհակալ թաղաւորի համար Աղէքսանդրապօլի հիւսիսային դռները շնոր կը հետաքրքրէին նրան։ Արգեշտին տիրելով պատերազմական այս նշանաւոր կէտին, իւր ձեռքում կունենար Փոքր Կովկասի ըոլոր անցքերը։ Այս տեղից ազատ կերպով նա կարող էր առաջ շարժել իւր զօրքը ինչպէս գէպի Աղստեփ հովիտը, այնպէս էլ Արփաչայի հովիտը։ Բայց արդեօք օգտուեց նա այս դռներով, որոնք պարզապէս նրա ձեռքն էին, արդեօք նա իւր զէնքի հետքաղաքակրթութիւնն էլ մտցրեց հեռաւոր հիւսիսում, Մեծ-Անդական կասի բարձրութիւններից այն կողմը՝ յայտնի չէ։ Նոյնպէս չեկարելի ասել, թէ նա այդ փոքրերը չարեց։ Գուցէ ապագայ հետախուզութիւնները հաստատեն, որ նա հեռու է գնացել։

Դ. Գ. Նիկողօսիան.

Ալեքսանդրապոլ։

Աօխատութիւնս կազմելիս օգտուել եմ հետեւեալ աղբիւրներից

- 1) Շերակ Հ. Ալեքսանին
- 2) Շերակայ Հոռոթիւնսեր. — Արէլ Կալիսկուպսսի
- 3) Հայոց վանքերը. — Կ. Կաստանեանի
- 4) Ուգարտեան արձանագրութիւննը. — Նիկոլսկու
- 5) Արխտակէս Լաստիվերտղի. — Պատմ. Հայոց
- 6) Եկեղեցական պատմութիւն. — Յուստիկ Վարդ. Մովսիսեան
- 7) Հայոց պատմութիւն. — Ա. Պալատանեան
- 8) Համառօտ տեղադրութիւն մեծին Հերակլ. — Պակայ. — Անդրեսդէկ Քահանայ Գէորգեանի
- 9) Պատմութիւն Հայոց. — Պառղիկ
- 10) Հոգ. Կառավարութեան արխիւցից